

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՈՒՄ

« » _____ 2017 թ. № _____ -Ն

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է՝

1. Հաստատել մանկապատանեկան մարզադպրոցի օրինակելի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարներին իրենց ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունը հաստատելիս առաջնորդվել սույն որոշման շրջանակներում հաստատվող մանկապատանեկան մարզադպրոցների օրինակելի կանոնադրությամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից: